



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ԿՈՄԻՏԵՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Գանգալի թիվ 59109/08)

ՎՃԻՌ

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

31 մարտի 2015

Սույն վճիռը վերջնական է դառնում Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:

Հայաստանի Հելսինկյան կոմիտեն ընդդեմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (Երրորդ Բաժանմունք) Պալատը, հանդես գալով հետևյալ կազմով՝
 Զոզեի Կասադեվալ [Josep Casadevall]՝ նախագահող,
 Լուիս Լոպես Գեռոա [Luis López Guerra],
 Յան Շիկուտա [Ján Šikuta],
 Դրագոլյուբ Պոպովիչ [Dragoljub Popović],
 Քրիստինա Պարդալոս [Kristina Pardalos],
 Զոհաննես Սիլվիս [Johannes Silvis],
 Յուլիա Անտոանելլա Մոտոկ [Iulia Antoanella Motoc]՝ դատավորներ,
 և Մարիալենա Ցիրլի [Marialena Tsirlis]՝ Բաժանմունքի քարտուղարի տեղակալ,
 2015 թվականի մարտի 10-ին տեղի ունեցած դռնփակ նիստում
 կայացրեց հետևյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը:

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Վարույթը հարուցվել է 2008 թվականի նոյեմբերի 10-ին «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի («Կոնվենցիա») 34-րդ հոդվածի համաձայն, Հայաստանում գործող հասարակական կազմակերպության՝ Հայաստանի Հելսինկյան կոմիտեի («Դիմումատու կազմակերպություն») կողմից Հայաստանի Հանրապետության դեմ Դատարան ներկայացված գանգատի (թիվ 59109/08) հիման վրա:

2. Դիմումատու կազմակերպությունը ներկայացրել է Երևանում գործող փաստաբան պրն. Ռ. Ռևազյանը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը («Կառավարություն») ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն. Գ. Կոստանյանը:

3. Դիմումատու կազմակերպությունը, մասնավորապես, պնդել է, որ քաղաքապետի 2008 թվականի մայիսի 8-ի որոշմամբ խախտվել է հավաքների ազատության իր իրավունքը, և որ նա իրավական պաշտպանության արդյունավետ միջոց չի ունեցել :

4. 2010 թվականի հունվարի 21-ին գանգատն ուղարկվել է Կառավարություն: Քանի որ Հայաստանի Հանրապետությունը ներկայացնող դատավորի պաշտոնը ներկայում թափուր է, Դատարանի նախագահը որոշել է դատավոր Զոհաննես Սիլվիսին նշանակել ժամանակավոր (*ad hoc*) դատավոր (Դատարանի կանոնակարգի 29-րդ կանոնի 2 (ա) կետ):

ՓԱՍՏԵՐԸ

I. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

5. Դիմումատու կազմակերպությունը մարդու իրավունքների բնագավառում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպություն է, որը գտնվում է Երևանում:

6. 2007 թվականի մայիսի 12-ին ոստիկանության բաժնում մահացել է երրորդ անձ՝ Լ.Գ-ն, ով, թերևս, սպանության գործով քննությանը ներգրավված վկա էր: Պաշտոնական վարկածի համաձայն՝ Լ.Գ-ն մահացել էր՝ փորձելով փախչել ոստիկանության բաժնի երկրորդ հարկի պատուհանից դուրս թռչելու միջոցով: Պարզվել է, որ այս դեպքը Հայաստանում մարդու իրավունքների բնագավառում գործունեություն իրականացնող խմբերի և քաղաքացիական հասարակության շրջանում զայրույթի ալիք էր բարձրացրել:

7. 2008 թվականի փետրվարի 19-ին Հայաստանում կայացան նախագահական ընտրություններ, որոնց հետևեցին հետընտրական զանգվածային հանրահավաքներ ու բողոքի ցույցեր, և իշխանության ու ընդդիմության կողմնակիցների միջև ստեղծվեց անելանելի վիճակ՝ հանգեցնելով բախումների և առնվազն տասը մարդու սպանության:

8. 2008 թվականի մարտի 1-ին Հայաստանի Հանրապետության նախագահը հայտարարեց արտակարգ դրություն 20 օրյա ժամկետով, որի ընթացքում արգելվեցին բոլոր հանրային հավաքները:

9. 2008 թվականի մայիսի 6-ին դիմումատու կազմակերպությունը դիմել էր Երևանի քաղաքապետին՝ իրազեկելով Լ.Գ.-ի մահվան առաջին տարելիցին նվիրված սգո երթ անցկացնելու մտադրության մասին: Երթը պետք է տեղի ունենար մայիսի 12-ին՝ երեկոյան ժամը 8-ից մինչև 9:30: Այն պետք է մեկնարկեր Հանրապետության հրապարակից և շարունակվեր Նալբանդյան փողոցով դեպի ոստիկանության բաժին:

10. 2008 թվականի մայիսի 8-ին քաղաքապետը որոշում էր ընդունել ծրագրված միջոցառումն արգելելու մասին՝ հղում կատարելով «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքի («Օրենք») 9-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետին և 13-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին՝ նշելով, որ՝

«ՀՀ ոստիկանության ... 2008 թվականի մայիսի 8-ի պաշտոնական եզրակացության համաձայն...՝ 2008 թվականի մարտի 1-ին անցկացված զանգվածային հրապարակային միջոցառումը վերածվել էր զանգվածային անկարգությունների՝ հանգեցնելով մարդկային զոհերի, և Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության կողմից այդ փաստի առթիվ հարուցված քրեական գործի քննության ընթացքում հանցագործության հետ կապված բոլոր հանգամանքներն ու հանցագործություն կատարած անձինք չեն բացահայտվել, ինչպես նաև [միջոցառման ժամանակ] օգտագործված ամբողջ զենք-զինամթերքը, որի շրջանառությունը կարող է վտանգ ներկայացնել քաղաքացիների կյանքի ու առողջության համար, չի հայտնաբերվել: Հետևաբար, նոր հանցագործություններն անհնար կլինի կանխել [խնդրո առարկա] զանգվածային հրապարակային միջոցառումն անցկացնելու դեպքում:

Ազգային անվտանգության ծառայության ...2008 թվականի մայիսի 7-ի պաշտոնական եզրակացության համաձայն...՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունն ունի հավաստի և ստուգված տվյալներ առ այն, որ խնդրո առարկա զանգվածային հրապարակային միջոցառումը թույլ տալը կհանգեցնի պետական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարոյականության խաթարմանը, ինչպես նաև սահմանադրական

իրավունքների ու ազատությունների խախտումների և անկարգությունների ու [նոր] հանցագործությունների կատարմանը»:

11. 2008 թվականի մայիսի 12-ի նամակով սույն որոշումն ուղարկվել էր դիմումատու կազմակերպություն: Նույն օրը ոստիկանությունը, որը, թերևս, տեղեկացվել էր 2008 թվականի մայիսի 8-ի որոշման մասին, կանխել էր կազմակերպիչների կողմից ծրագրված միջոցառման անցկացումը:

12. 2008 թվականի մայիսի 13-ին դիմումատու կազմակերպությունը ստացել էր 2008 թվականի մայիսի 12-ի նամակը:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենք (ուժի մեջ է եղել տվյալ ժամանակահատվածում)

13. Օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ հրապարակային միջոցառման անցկացումը լիազոր մարմնի կողմից կարող է արգելվել, եթե առկա են հավաստի տվյալներ, որ այն ուղղված է սահմանադրական կարգի բռնի տապալմանը կամ էթնիկ, ռասսայական կամ կրոնական ատելություն բորբոքելուն կամ բռնության կամ պատերազմի քարոզչությանը, կամ կարող է հանգեցնել զանգվածային անկարգությունների և հանցագործությունների կատարմանը կամ պետական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարոյականության խաթարմանը, կամ այլոց սահմանադրական իրավունքների ու ազատությունների խախտումների: Այդպիսի տվյալները կարող են համարվել հավաստի, եթե դրանց առնչությամբ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանությունը կամ ազգային անվտանգության ծառայությունը ներկայացրել է պաշտոնական հիմնավորված եզրակացություն: Նույն կարգով վերոնշյալ մարմինները եզրակացություն են տալիս այդ հիմքերի վերացման պարագայում: Այդպիսի եզրակացություն տրվում է նաև Օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերում:

14. Օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ այն դեպքերում, երբ զանգվածային հրապարակային միջոցառումները վերածվել են զանգվածային անկարգությունների, որոնք հանգեցրել են մարդկային զոհերի, նոր հանցագործությունները կանխելու նպատակով, եթե սպառվել են կանխման բոլոր մյուս միջոցները, լիազոր մարմինը կարող է ժամանակավորապես արգելել զանգվածային հրապարակային միջոցառումների անցկացումը մինչև հանցագործության հանգամանքների ու հանցագործություն կատարած անձանց ինքնության բացահայտումը :

15. Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ զանգվածային հրապարակային միջոցառումներ կարող են անցկացվել միայն լիազոր մարմնին գրավոր իրազեկելուց հետո:

16. Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ կազմակերպիչները զանգվածային հրապարակային միջոցառումներ անցկացնելու մտադրության մասին գրավոր իրազեկում են միջոցառման անցկացման վայրի համայնքի

դեկավարին կամ, հրապարակային միջոցառումը Երևանում անցկացնելու դեպքում՝ Երևանի քաղաքապետին, միջոցառումն անցկացնելու ծրագրված օրվանից ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օր առաջ, և ոչ շուտ, քան քսան օր առաջ:

17. Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիազոր մարմինն իրազեկումը քննարկում է այն ստանալու պահից 72 ժամվա ընթացքում՝ ըստ իրազեկումների ստացման հերթականության:

18. Օրենքի 12-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ իրազեկման քննարկման արդյունքում, զանգվածային հրապարակային միջոցառման անցկացման մասին իրազեկումն ընդունվում է ի գիտություն և միջոցառումն անցկացվում է իրազեկման մեջ նշված վայրում և ժամին, եթե բացակայում են 13-րդ հոդվածում նշված հանգամանքները: Օրենքի 13-րդ հոդվածում նշված հանգամանքների առկայության դեպքում որոշում է կայացվում զանգվածային հրապարակային միջոցառումն արգելելու մասին:

19. Օրենքի 12-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ լիազոր մարմինն իրազեկման քննարկման արդյունքում ընդունած իր որոշման մասին անմիջապես հայտնում է կազմակերպիչներին և ոստիկանություն, ինչպես նաև որոշումը փակցնում է լիազոր մարմնի՝ դրա համար նախատեսված և հանրության համար մատչելի ու տեսանելի տեղում: Ընդ որում, լիազոր մարմնի որոշումը պետք է փակցված մնա համապատասխան տեղում՝ մինչև իրազեկման մեջ նշված զանգվածային հրապարակային միջոցառման անցկացման համար ծրագրված օրվա ժամը 18-ը:

20. Օրենքի 12-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ եթե լիազոր մարմնի որոշմամբ չի արգելվում զանգվածային հրապարակային միջոցառման անցկացումը, ապա կազմակերպիչներն իրավունք ունեն տրված իրազեկման պայմաններով անցկացնելու զանգվածային հրապարակային միջոցառումը:

21. Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ զանգվածային հրապարակային միջոցառումը կարող է արգելվել միայն այն դեպքում, երբ, *inter alia*, առկա են սույն Օրենքի 9-րդ հոդվածով սահմանված հիմքերը:

22. Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ զանգվածային հրապարակային միջոցառման անցկացումն արգելելու մասին որոշման մեջ պետք է հիմնավոր և հստակ շարադրվեն զանգվածային հրապարակային միջոցառման անցկացումն արգելելու պատճառները:

23. Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ զանգվածային հրապարակային միջոցառման անցկացումն արգելելու մասին որոշումը կարող է բողոքարկվել դատարան: Դատարանը վճիռ է կայացնում 24 ժամվա ընթացքում: Զանգվածային հրապարակային միջոցառման անցկացումն արգելելու մասին որոշումն անվավեր ճանաչելու մասին դատարանի վճիռն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Բ. Վարչական դատավարության օրենսգիրք

24. Վարչական դատավարության օրենսգրքի 66–69–րդ հոդվածների համաձայն՝ վարչական դատարան կարելի է ներկայացնել չորս տեսակի հայց՝ վիճարկման հայց, որով պահանջվում է ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնել միջամտող վարչական ակտը (66–րդ հոդված), պարտավորեցման հայց, որով պահանջվում է ընդունել բարենպաստ վարչական ակտ (67–րդ հոդված), գործողության կատարման հայց, որով պահանջվում է կատարել որոշակի գործողություններ կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություններից (68–րդ հոդված) և ճանաչման հայց, որով պահանջվում է ճանաչել որևէ իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը (69–րդ հոդված): Ճանաչման հայց կարող է ներկայացվել միայն այն դեպքում, երբ հնարավոր չէ հայց ներկայացնել 66–68–րդ հոդվածների համաձայն : Այդպիսի հայցով կարելի է պահանջել ճանաչել վարչական ակտի առ ոչինչ լինելը, ինչպես նաև ոչ իրավաչափ ճանաչել այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը կամ գործողությունը կամ անգործությունը, եթե հայցվորն արդարացիորեն շահագրգռված է դրանում, այսինքն՝ ա) առկա է նմանատիպ ակտ ընդունելու կամ նմանատիպ գործողություններ կատարելու կամ նմանատիպ անգործության վտանգ. բ) հայցվորը մտադիր է պահանջել գույքային վնասի հատուցում կամ գ) հայցվորը նպատակ է հետապնդում վերականգնելու իր պատիվը, արժանապատվությունը կամ համբավը:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

1. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 11–ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ

25. Դիմումատու կազմակերպությունը բողոք էր ներկայացրել, որ քաղաքապետի սզո երթի անցկացման արգելքով խախտվել էր Կոնվենցիայի 11–րդ հոդվածով նախատեսված հավաքների ազատության իր իրավունքը, , համաձայն որի՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ հավաքների ազատության և այլոց հետ միավորվելու ազատության իրավունք՝ ներառյալ իր շահերի պաշտպանության նպատակով արհմիություններ կազմելու և դրանց անդամակցելու իրավունքը:

2. Այդ իրավունքների իրականացումը ենթակա չէ որևէ սահմանափակման, բացի այն սահմանափակումներից, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության կամ հասարակական անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը կամ այլոց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու նպատակով: Սույն հոդվածը չի խոչընդոտում օրինական սահմանափակումներ նախատեսել զինված ուժերի, ոստիկանության կամ պետական կառավարման մարմինների կողմից այդ իրավունքների իրականացման նկատմամբ »:

Ա. Ընդունելիություն

1. Կողմերի փաստարկները

26. Կառավարությունը պնդել է, որ դիմումատու կազմակերպությունը չի սպառել իրավական պաշտպանության ներպետական միջոցները, քանի որ իր իրավունքների խախտումը ճանաչելու նպատակով վարչական դատարան չի դիմել: Մասնավորապես, քաղաքապետարանի գործողությունը կամ անգործությունը կարող էր բողոքարկվել դատարան՝ համաձայն Վարչական [դատարանական] օրենսգրքի 68-րդ հոդվածի: Ուստի, դիմումատու կազմակերպությունը, հղում կատարելով Օրենքի 12-րդ հոդվածի 7-րդ մասին, կարող էր վիճարկել քաղաքապետարանի անգործությունը, այսինքն՝ քաղաքապետի 2008 թվականի մայիսի 8-ի որոշման մասին կազմակերպիչներին անմիջապես չտեղեկացնելու հանգամանքը և քաղաքապետի որոշման մասին ծրագրված միջոցառման անցկացման օրվանից հետո կազմակերպությանը հայտնելու փաստը: Բողոքարկման այդ մեխանիզմն իրավական պաշտպանության արդյունավետ միջոց էր, որի միջոցով հնարավոր էր ճանաչել դիմումատու կազմակերպության իրավունքների խախտումը: Դիմումատու կազմակերպությունը, սակայն, չի հետևել այդ ընթացակարգին:

27. Դիմումատու կազմակերպությունը պնդել է, որ ներպետական պրակտիկայի համաձայն, վարչական դատարանը կանոնավոր կերպով մերժել է պետական մարմինների դեմ հավաքների ազատության իրավունքի խախտումը ճանաչելու պահանջով ներկայացված հայցադիմումների ընդունումը՝ Վարչական դատարանի օրենսգրքի 66-69-րդ հոդվածներով թվարկված կատեգորիաներից որևէ մեկին չպատկանելու հիմքով: Եթե դիմումատու կազմակերպությունը սահմանված ժամկետում ծանուցված լիներ 2008 թվականի մայիսի 8-ի որոշման մասին, այն, Օրենքի դրույթների համաձայն, տվյալ որոշումը վարչական դատարանում վիճարկելու հնարավորություն կունենար, և դատարանը պարտավորված կլիներ 24 ժամվա ընթացքում որոշում կայացնել՝ այդպիսով ապահովելով իրավական պաշտպանության արդյունավետ միջոց: Սակայն, քանի որ դիմումատու կազմակերպությունը որոշումն ստացել էր ծրագրված միջոցառումից հետո, դրանից հետո ներկայացված հայցադիմումը չէր կարող ապահովել իրավական պաշտպանության արդյունավետ միջոց:

28. Ինչ վերաբերում է քաղաքապետարանի անգործությունը բողոքարկելուն, ապա այդպիսի հայցադիմումի ընդունումը նույնպես կմերժվեր, քանի որ վարչական մարմնի անգործության դեմ բերված հայցերը, եթե այդպիսի անգործությունը ցուցաբերվել է վերջնական վարչական ակտ ընդունելու ընթացքում, չի կարող լինել առանձին վիճարկման առարկա:

2. Դատարանի գնահատականը

29. Դատարանը կրկին նշում է, որ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված իրավական պաշտպանության ներպետական միջոցները սպառելու կանոնը պարտավորեցնում է այն անձանց, ովքեր ցանկանում են զանգատ ներկայացնել պետության դեմ միջազգային դատական ատյանում, առաջին հերթին, օգտվել ներպետական իրավական համակարգով

նախատեսված իրավական պաշտպանության միջոցներից՝ դրանով իսկ պետություններին զերծ պահելով միջազգային ատյանի առջև իրենց գործողությունների համար պատասխան տալուց, քանի դեռ նրանք հնարավորություն չեն ունեցել խնդիրն իրենց իրավական համակարգի միջոցով լուծելու: Այդ կանոնը պահպանելու համար դիմումատուն պետք է սահմանված կարգով օգտագործի այն իրավական պաշտպանության միջոցները, որոնք հասանելի են և բավարար՝ ենթադրյալ խախտումների մասով հատուցում ստանալու համար (տե՛ս *Աստենովը և այլոք ընդդեմ Բուլղարիայի*, թիվ 24760/94, §85, ՄԻԵԴ-1999-VIII):

30. Ավելին, 35-րդ հոդվածի համաձայն, իրավական պաշտպանության հասանելի և բավարար միջոցների առկայությունը պետք է ոչ միայն տեսականորեն, այլ նաև գործնականում բավականաչափ որոշակի լինի, հակառակ դեպքում կհանգեցնի պահանջվող մատչելիության և արդյունավետության բացակայությանը (տե՛ս, մասնավորապես, *Դե Յոնզը, Բալժեթը և Վան դեն Բրինկն ընդդեմ Նիդերլանդների*, 1984 թվականի մայիսի 22, §39, Սերիա Ա թիվ 77 և *Վերնիլոն ընդդեմ Ֆրանսիայի*, 1991 թվականի փետրվարի 20, §27, Սերիա Ա թիվ 198): Իրավական պաշտպանության ներպետական միջոցները չսպառելու հարցը բարձրացնող Կառավարության վրա է դրվում այն հանգամանքն ապացուցելու պարտականությունը, որ այդ միջոցը եղել է արդյունավետ և տվյալ ժամանակահատվածում տեսականորեն ու գործնականում հասանելի, այսինքն՝ այն եղել է մատչելի, դրա միջոցով հնարավոր է եղել հատուցում ստանալ դիմումատուի բողոքների մասով և ապահովվել է հաջողության հասնելու ողջամիտ հնարավորություն (տե՛ս *Ակդիվարը և այլոք ընդդեմ Թուրքիայի*, 1996 թվականի սեպտեմբերի 16, §68, *Վճիռների և որոշումների ժողովածու* 1996-IV):

31. Սույն գործում Կառավարությունը նշել է, որ դիմումատու կազմակերպությունը պետք է վարչական դատարան բողոքարկած լիներ քաղաքապետարանի 2008 թվականի մայիսի 8-ի որոշման մասին իրեն չհայտնելու և սահմանված ժամկետում այդ որոշման պատճենը չհանձնելու հանգամանքը: Դիմումատու կազմակերպությունը չի արել դա և, հետևաբար, չի սպառել իրավական պաշտպանության ներպետական միջոցները: Դատարանը նշում է, սակայն, որ դիմումատու կազմակերպության բողոքը, ըստ էության, վերաբերում է քաղաքապետարանի կողմից երթի անցկացումն արգելելուն, այսինքն՝ 2008 թվականի մայիսի 8-ի որոշմանը, այլ ոչ թե սահմանված ժամկետում այդ որոշման պատճենը չհանձնելուն: Ուստի պարզ չէ, թե ինչպես քաղաքապետարանի անգործությունը բողոքարկելու հայցով կարող էր ապահովվել իրավական պաշտպանության միջոց դիմումատու կազմակերպության բողոքների մասով:

32. Ինչ վերաբերում է իրավական պաշտպանության հասանելի միջոցներին, ապա Դատարանը նշում է, որ դիմումատու կազմակերպությունը, ՀՀ օրենսդրության համաձայն, քաղաքապետի արգելքը դատարան բողոքարկելու իրավունք ուներ: Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին և 7-րդ մասերի ու 13-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քաղաքապետը պետք է

առավելագույնը 72 ժամվա ընթացքում որոշում ընդունելու դիմումատու կազմակերպության՝ երթ անցկացնելու դիմումի վերաբերյալ: Սույն որոշման մասին պետք էր հայտնել դիմումատու կազմակերպությանը «անմիջապես», իսկ այն դատարան բողոքարկելու դեպքում դատարանը պետք է որոշումն անվավեր ճանաչելու կամ հաստատելու վերաբերյալ վճիռ կայացնել առավելագույնը 24 ժամվա ընթացքում: Ուստի, պարզվել է, որ տեսականորեն, դիմումատու կազմակերպությունն իր տրամադրության տակ ունել իրավական պաշտպանության միջոց, որով հնարավոր էր ստանալ համապատասխան հատուցում՝ սահմանված ժամկետում անվավեր ճանաչելով քաղաքապետի արգելքը:

33. Սակայն, գործնականում դիմումատու կազմակերպությունը զրկվել էր իրավական պաշտպանության այս միջոցից: Մասնավորապես, դիմումատու կազմակերպությունը 2008 թվականի մայիսի 12-ին երթ անցկացնելու դիմումը քաղաքապետարան ներկայացրել էր 2008 թվականի մայիսի 6-ին, այսինքն՝ թույլատրելի ժամկետներում (տե՛ս վերևում՝ §16): Քաղաքապետը, նույնպես, պահպանելով համապատասխան ժամկետները, որոշում էր կայացրել 2008 թվականի մայիսի 8-ին, այսինքն՝ ծրագրված միջոցառման օրվանից չորս օր առաջ: Սակայն, այդ որոշման պատճենն ուղարկվել էր դիմումատու կազմակերպությանը միայն 2008 թվականի մայիսի 12-ին, այսինքն՝ ծրագրված միջոցառման անցկացման օրը, իսկ դիմումատու կազմակերպությունն այն ստացել էր հաջորդ օրը: Քաղաքապետի որոշման ուշ հանձնումը, որը հազիվ թե հնարավոր լինի Օրենքի 12-րդ հոդվածի 7-րդ մասի իմաստով «անմիջապես» համարել, ըստ էության, զրկել էր դիմումատու կազմակերպությանը, նախքան ծրագրված միջոցառման օրը, արգելքն անվավեր ճանաչելու հնարավորությունից, որը թույլ կտար անցկացնել երթը:

34. Ինչ վերաբերում է սահմանված արգելքը միջոցառումից հետո անվավեր ճանաչելու հնարավորությանը, ապա եթե նույնիսկ ենթադրենք, թե ներպետական իրավունքով նախատեսվում էր այդպիսի հնարավորություն, Դատարանը կրկին նշում է, որ որոշակի հանգամանքներում, երբ հանրահավաքների անցկացման ժամանակը կարևոր է դրանց կազմակերպիչների ու մասնակիցների համար, և երբ կազմակերպիչները ժամանակին իրազեկել են իրավասու մարմիններին, իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի գաղափարը ենթադրում է դատարանի որոշում ստանալու հնարավորություն՝ նախքան ծրագրված միջոցառումների անցկացման ժամանակը: Ժողովրդավարական բանավեճի էությունից բխում է, որ որոշակի կարծիքներ բարձրաձայնելու նպատակով կազմակերպված հանրային հանդիպումների անցկացման ժամանակը կարող է վճռորոշ լինել՝ այդպիսի հանդիպումների քաղաքական և սոցիալական նշանակության առումով: Եթե հանրային հավաքը կազմակերպվում է այն ժամանակ, երբ ընթացիկ սոցիալական կամ քաղաքական բանավեճում տվյալ սոցիալական հարցը կորցնում է իր արդիականությունը կամ կարևորությունը, ապա հանդիպման ազդեցությունը կարող է էականորեն նվազել: Եթե հավաքների ազատության իրավունքի՝ նպատակահարմար ժամանակ իրականացումը կանխվում է, ապա այն կարող է դառնալ անիմաստ (տե՛ս

Բազսկովսկին և այլոք ընդդեմ Լեհաստանի, թիվ 1543/06, §§81-82, 2007 թվականի մայիսի 3):

35. Սույն գործում Դատարանը չի կարող անտեսել դիմումատու կազմակերպության կողմից ծրագրված միջոցառման անցկացման համար ընտրված օրվա կարևորությունը: Օրը պատահական չէր ընտրվել. այդ օրը լրանում էր ողբերգական իրադարձության՝ ոստիկանության բաժնում երրորդ անձի՝ Լ.Գ-ի մահվան առաջին տարելիցը, որը դիմումատու կազմակերպությունը ծրագրում էր նշել տարելիցի օրն անցկացվելիք սգո երթով: Ուստի, միջոցառման անցկացման ժամանակը հատուկ կարևորություն ուներ, և դիմումատու կազմակերպությունը պետք է կարողանար մինչև ծրագրված միջոցառման անցկացման ժամանակն ստանալ դատարանի որոշում (տե՛ս *mutatis mutandis*, նույն տեղում, §83):

36. Վերջապես, Կառավարությունը չի նշել կամ նույնիսկ չի առարկել դիմումատու կազմակերպության այն փաստարկներին, որ Վարչական [դատարանության] օրենսգրքով նախատեսված ընթացակարգերից որևէ մեկի միջոցով հնարավոր էր ստանալ ուշացած հատուցում դիմումատու կազմակերպության բողոքների մասով, ինչպես օրինակ՝ դիմումատու կազմակերպության՝ խաղաղ հավաքների ազատության իրավունքի խախտման ճանաչումը և, անհրաժեշտության դեպքում, փոխհատուցման վճարումը: Բացի դրանից, Դատարանի տրամադրության տակ գտնվող ոչ մի նյութ չի վկայում այն մասին, որ քննարկվող ժամանակահատվածում առկա են եղել իրավական պաշտպանության այդպիսի միջոցներ:

37. Վերոնշյալի լույսի ներքո Դատարանը մերժում է իրավական պաշտպանության ներպետական միջոցները չսպառելու Կառավարության պնդումը:

38. Դատարանը նշում է, որ սույն բողոքը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի (ա) ենթակետի իմաստով ակնհայտ անհիմն չէ: Դատարանն այնուուիետև նշում է, որ այն անընդունելի չէ որևէ այլ հիմքով: Հետևաբար, այն պետք է համարվի ընդունելի:

Բ. Գործի ըստ էության քննություն

1. Կողմերի փաստարկները

39. Կառավարությունը պնդել է, որ դիմումատու կազմակերպության՝ հավաքների ազատության իրավունքի խախտում տեղի չի ունեցել: Քանի որ դիմումատու կազմակերպությունն օրենքով սահմանված 72 ժամվա ընթացքում չի տեղեկացվել քաղաքապետի որոշման մասին, այն, Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին, 7-րդ և 8-րդ մասերի համաձայն, ինքնաբերաբար ձեռք է բերել ծրագրված միջոցառումն իրականացնելու իրավունք: Միջոցառման օրն անտեղյակ լինելով այդ որոշման մասին՝ նրանք օրինական իրավունք են ունեցել անցկացնելու հանրահավաքը, ինչպես ծրագրված էր: Դիմումատու կազմակերպությունը, սակայն, որոշել է չօգտվել այդ իրավունքից:

40. Դիմումատու կազմակերպությունը պնդել է, որ մինչև ծրագրված միջոցառման օրը քաղաքապետարանից որևէ որոշում չստանալը չէր

նշանակում, որ այն ինքնաբերաբար ստացել էր միջոցառումն անցկացնելու իրավունք: Դիմումատու կազմակերպությունը պետք է իր տիրապետության տակ ունենար որոշումը՝ վստահ լինելու համար, որ միջոցառումն արտոնվել էր: Ավելին, Կառավարության պնդումը, որ դիմումատու կազմակերպությունը նախընտրել էր զերծ մնալ ծրագրված միջոցառումն անցկացնելու փորձ կատարելուց, չի համապատասխանում իրականությանը: Իրականում, չստանալով որևէ որոշում, այն ցանկացել էր 2008 թվականի մայիսի 12-ին անցկացնել երթը, ինչպես ծրագրված էր, սակայն ոստիկանության ծառայողները, որոնք տեղեկացված էին քաղաքապետի արգելքի մասին, թույլ չեն տվել դիմումատու կազմակերպությանը և հավաքված մարդկանց անցկացնել այն:

2. Դատարանի գնահատականը

ա) Արդյոք եղել է միջամտություն խաղաղ հավաքների ազատության իրավունքի իրականացմանը:

41. Կառավարությունը, թերևս, նշել է, որ դիմումատու կազմակերպության՝ խաղաղ հավաքների ազատության իրավունքի իրականացմանը միջամտություն չի եղել, քանի որ այն, չստանալով քաղաքապետի 2008 թվականի մայիսի 8-ի որոշման պատճենը, ծրագրված միջոցառումն անցկացնելու իրավունք է ունեցել: Սակայն, Դատարանը չի ընդունում Կառավարության փաստարկները: Համապատասխան որոշմամբ դիմումատու կազմակերպությանն արգելվել էր անցկացնել միջոցառումը, և այն փաստը, որ դրա պատճենը չէր հանձնվել դիմումատու կազմակերպությանը, որևէ կերպ չի վերացրել այդ որոշումը: Ավելին, ոստիկանությունը, հավանաբար, քաղաքապետի արգելքի հիման վրա, թույլ չի տվել դիմումատու կազմակերպությանն անցկացնել ծրագրված երթը:

42. Ուստի, միջամտություն է եղել դիմումատու կազմակերպության՝ խաղաղ հավաքների ազատության իրավունքի իրականացմանը:

բ) Արդյոք միջամտությունն արդարացված էր:

43. Միջամտությունը կհամարվի 11-րդ հոդվածի խախտում, եթե այն չլինի «օրենքով նախատեսված», չհետապնդի 2-րդ կետով նախատեսված մեկ կամ մի քանի իրավաչափ նպատակ և այդ նպատակներն իրագործելու համար չլինի «անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում»:

44. Դատարանը նշում է, որ ոչինչ չի վկայում այն մասին, որ միջամտությունը նախատեսված չէր օրենքով: Ավելին, Դատարանը կարող է ընդունել, որ միջամտությունն անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու իրավաչափ նպատակ է ունեցել :

45. Ինչ վերաբերում է երրորդ պահանջին, ապա Դատարանը կրկին նշում է, որ 11-րդ հոդվածով ամրագրված՝ խաղաղ հավաքների իրավունքը հիմնարար իրավունք է ժողովրդավարական հասարակությունում, և այն, ինչպես և արտահայտվելու ազատության իրավունքը, այդպիսի

հասարակության հիմնաքարերից մեկն է (տե՛ս *Քրիստոնեա-ժողովրդավարական ազգային կուսակցությունն ընդդեմ Մոլորվայի*, թիվ 28793/02, §62, ՄԻԵԴ 2006-II)

46. Պետությունները ոչ միայն պետք է երաշխավորեն խաղաղ հավաքներ անցկացնելու իրավունքը, այլ նաև պետք է ձեռնպահ մնան այդ իրավունքի նկատմամբ անհիմն և անուղղակի սահմանափակումներ կիրառելուց: Հաշվի առնելով հավաքների ազատության իրավունքի կարևոր բնույթը և ժողովրդավարության հետ դրա սերտ կապը՝ պետք է առկա լինեն համոզիչ և ծանրակշիռ պատճառներ՝ այդ իրավունքի իրականացմանը միջամտությունն արդարացնելու համար (տե՛ս *Օուրանիո Տոքսոն և այլոք ընդդեմ Հունաստանի*, թիվ 74989/01, §36, ՄԻԵԴ 2005-X (քաղվածքներ)):

47. Մանրամասն ուսումնասիրելիս վիճարկվող միջամտությունը Դատարանը պետք է պարզի, թե արդյոք պատասխանող պետությունն իր հայեցողական իրավունքն իրականացրել է ողջամտորեն, զգուշորեն և բարեխղճորեն: Դատարանը պետք է բողոքի առարկա հանդիսացող միջամտությունը դիտարկի նաև ամբողջ գործի լույսի ներքո և որոշի, թե արդյոք այն «համաչափ էր հետապնդվող իրավաչափ նպատակին» և թե արդյոք միջամտությունն հիմնավորելու համար պետական մարմինների կողմից ներկայացված պատճառները «վերաբերելի և բավարար» են: Այդ գործընթացում Դատարանը պետք է համոզվի, որ պետական մարմինները կիրառել են այնպիսի չափորոշիչներ, որոնք համապատասխանում են 11-րդ հոդվածով սահմանված սկզբունքներին և, ավելին, որ նրանց որոշումները հիմնված են համապատասխան փաստերի պատշաճ գնահատման վրա (տե՛ս *Ստանկովը և «Իլիդեն» միավորված մակեդոնական կազմակերպությունն ընդդեմ Բուլղարիայի*, թիվ 29221/95 և 29225/95, §87, ՄԻԵԴ 2001-IX, և *Մահմուդովն ընդդեմ Ռուսաստանի*, թիվ 35082/04, §65, 2007 թվականի հուլիսի 26):

48. Սույն գործով Դատարանը նշում է, որ տվյալ երթն արգելելու պատճառն այն էր, որ հետընտրական հանրահավաքները հանգեցրել էին բախումների և մարդկային զոհերի, քննությունը դեռևս շարունակվում էր, և հանցագործություն կատարած բոլոր անձինք չէին բացահայտվել կամ ամբողջ զենքը չէր հայտնաբերվել: Սակայն Դատարանը կասկածներ ունի առ այն, թե արդյոք նշվածը կարող էր համարվել տվյալ երթն արգելելու վերաբերելի կամ բավարար պատճառ:

49. Առաջին, երթը նախատեսվում էր անցկացնել հետընտրական բախումներից ավելի քան երկու և ՀՀ նախագահի կողմից հայտարարված արտակարգ դրության ժամկետի ավարտից ավելի քան մեկ ամիս հետո (տե՛ս վերևում՝ §§ 7 և 8):

50. Երկրորդ, չկա որևէ ապացույց, որը կվկայեր այն մասին, որ ծրագրված երթի կազմակերպիչները կամ մասնակիցները որևէ կերպ ներգրավված կամ ներքաշված են եղել հետընտրական անկարգությունների կամ բռնության մեջ:

51. Երրորդ, ոչինչ չի վկայում այն մասին, որ ծրագրված երթի կազմակերպիչները կամ մասնակիցները բռնություն գործադրելու

մտադրություններ են ունեցել, կամ որ երթը կարող էր որևէ այլ պատճառով վերաձվել զանգվածային անկարգությունների: Դատարանն այս առումով նշում է, որ ծրագրված երթի նպատակը որևէ առնչություն չունի քաղաքականության, ընտրությունների կամ ընդդիմության և կառավարության միջև հակամարտության հետ, այլ փոխարենը՝ նպատակ ունի բարձրացնելու հանրային կարևորության հարցի, այն է՝ ոստիկանության բաժնում գտնվելու ժամանակ անձի մահվան վերաբերյալ իրազեկվածության մակարդակը: Ըստ դիմումատու կազմակերպության՝ այն պետք է լինի ողբերգական իրադարձության տարելիցը նշելու նպատակով կազմակերպված և անվտանգությանը որևէ սպառնալիք չներկայացնող խաղաղ երթ: Դատարանը պատճառ չունի կասկածի տակ դնելու այս պնդումը: Այն նշում է, որ քաղաքապետի հղումը Ազգային անվտանգության ծառայության պաշտոնական եզրակացությանը, ըստ որի երթը վտանգ է ներկայացրել, շատ ընդհանուր է ձևակերպված (տե՛ս վերևում՝ §10): Նույնիսկ պարզ չէ, արդյոք քաղաքապետին երբևէ ներկայացվել են նշված «հավաստի և ստուգված տվյալները», կամ որոնք են այդ տվյալները կամ արդյոք այդ տվյալները գոյություն ունեցել են: Ուստի, պարզվել է, որ այս առումով քաղաքապետի եզրակացությունը հիմնավորված չէ որևէ կոնկրետ, հստակ և համոզիչ ապացույցով:

52. Վերոնշյալ դիտարկումները բավարար են, որպեսզի Դատարանը եզրակացնի, որ դիմումատու կազմակերպության՝ խաղաղ հավաքների ազատության իրավունքի իրականացմանը միջամտելն «անհրաժեշտ չէր ժողովրդավարական հասարակությունում»:

53. Համապատասխանաբար, խախտվել է Կոնվենցիայի 11-րդ հոդվածը:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 13-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ

54. Դիմումատու կազմակերպությունը բողոք էր ներկայացրել առ այն, որ զրկված է եղել իրավական պաշտպանության արդյունավետ միջոցից՝ ի խախտումն Կոնվենցիայի 13-րդ հոդվածի, համաձայն որի՝

«Յուրաքանչյուր ոք, ում՝ Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք»:

Ա. Ընդունելիություն

55. Դատարանը նշում է, որ սույն բողոքը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի (ա) ենթակետի իմաստով ակնհայտ անհիմն չէ: Դատարանն այնուհետև նշում է, որ այն անընդունելի չէ որևէ այլ հիմքով: Հետևաբար, այն պետք է համարվի ընդունելի:

Բ. Գործի ըստ էության քննություն

1. Կողմերի փաստարկները

56. Կառավարությունը պնդել է, որ ՀՀ օրենսդրությամբ, մասնավորապես՝ Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով, 12-րդ հոդվածի 1-ին մասով և 13-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված ընթացակարգի համաձայն պետական մարմինները պարտավոր են զանգվածային հրապարակային միջոցառում անցկացնելու դիմումի վերաբերյալ որոշում ընդունել այնպիսի ժամկետում, որը դիմումատուին հնարավորություն կընձեռի անբարենպաստ որոշումը բողոքարկելու վարչական դատարան՝ նախքան ծրագրված միջոցառման օրը: Ուստի, դիմումատու կազմակերպությունն իր տրամադրության տակ ունեցել է իրավական պաշտպանության արդյունավետ միջոց:

57. Դիմումատու կազմակերպությունը պնդել է, որ Կառավարությունը սահմանափակվել է միայն համապատասխան ներպետական օրենքի տեսական վերլուծությամբ՝ անտեսելով գործի կոնկրետ հանգամանքները և այն փաստը, որ այդ օրենսդրության կամայական կիրառման հետևանքով այն զրկվել է իրավական պաշտպանության արդյունավետ միջոցից: Որպեսզի դիմումատու կազմակերպությունը կարողանար ըստ էության բողոքարկել քաղաքապետի արգելքը վարչական դատարան, և որպեսզի այդ բողոքն արդյունավետ լիներ, անհրաժեշտ էր, որ քաղաքապետի որոշումը հանձնվեր իրեն ծրագրված միջոցառումից առնվազն 24 ժամ առաջ: Ծրագրված միջոցառումից հետո ստացված որոշումը բողոքարկելը ոչ միայն անարդյունավետ, այլ նաև անիմաստ կլիներ:

2. Դատարանի գնահատականը

58. Դատարանը կրկին նշում է, որ 13-րդ հոդվածով պահանջվում է ապահովել ներպետական իրավական պաշտպանության այնպիսի միջոց, որը հնարավորություն կտա իրավասու պետական մարմինն ըստ էության քննության առնելու Կոնվենցիայի հիման վրա ներկայացված համապատասխան բողոքը և տրամադրելու համապատասխան հատուցում, թեև Պայմանավորվող պետություններն որոշակի հայեցողական իրավունք ունեն որոշելու, թե ինչպես պետք է կատարեն սույն դրույթով նախատեսված իրենց պարտավորությունները (տե՛ս *Չահայն ընդդեմ Միացյալ Թագավորության*, 1996 թվականի նոյեմբերի 15, §145, *Վճիռների և որոշումների ժողովածու* 1996-V):

59. Սույն գործում Դատարանը եզրակացրել է, որ դիմումատու կազմակերպության՝ 11-րդ հոդվածով սահմանված իրավունքները խախտվել են (տե՛ս վերևում՝ §53): Հետևաբար, այն, Դատարանի նախադեպային իրավունքի իմաստով, ուներ հիմնավոր պահանջ, և ուստի, 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ իրավական պաշտպանության միջոցի իրավունք:

60. Դատարանը հաշվի է առնում իր եզրահանգումներն այն մասին, որ դիմումատու կազմակերպությունը գործնականում զրկված է եղել իրավական պաշտպանության միջոցից, որով հնարավոր կլիներ ստանալ բավարար և համապատասխան հատուցում՝ ելնելով գործի որոշակի հանգամանքներից, և

որ չի ապացուցվել իրավական պաշտպանության այլ արդյունավետ միջոցների առկայությունը (տե՛ս վերևում՝ §§32–36): Նշվածից կարելի է եզրակացնել, որ դիմումատու կազմակերպությունը հավաքների ազատության իր իրավունքի խախտման հետ կապված բողոքի մասով չի ունեցել իրավական պաշտպանության արդյունավետ ներպետական միջոց:

61. Համապատասխանաբար, խախտվել է Կոնվենցիայի 13-րդ հոդվածը:

III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅՈՒՆ

62. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

63. Դիմումատու կազմակերպությունը պահանջ չի ներկայացրել արդարացի փոխհատուցման համար:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ՝

1. Հայտարարում է գանգատն ընդունելի.
2. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 11-րդ հոդվածի խախտում.
3. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում:

Կատարված է անգլերենով և գրավոր ծանուցվել է 2015 թվականի մարտի 31-ին՝ Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն:

Մարիալենա Ցիրլի [Marialena Tsirli]
Քարտուղարի տեղակալ

Ջոզեփ Կասադեվալ [Josep Casadevall]
Նախագահող